

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 14

5 ԱՊՐԻԼ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթերի սահեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար հառսուն դր. 40 փաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանկ կամ 5 բուլլի: Թղթասարական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռն-ԲԵ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐՍՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غزتي ادارہ

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Գալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը չի գտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

(Թորթախտ, պրօնչիտ, հազ, հարբուխ և բարակցաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրաճա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է. Ըռաջին անգամ անհուկելով բժշկելու կ'ընկի և կը շարունակէ: Ըմեն տարի հազարաւոր տղայք մահուանէ աղատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և ծարմնոյ կեանք կուտայ: Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Ս'իշտ վրան այս պատկերով վարդադոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշելու փայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաձառները ին ծախեն:

ԱՊՍՈՒԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՇԱՐԱՐԱՆԿԱՆՈՎ

Եթէ կուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13

ՎԵՐՅՈՒՆ ԳԻՆ

ՊՐԱՍՏԻՄՈՐՈՒ



ՎԵՐՅՈՒՆ ԳԻՆ

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 մասնավճար: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 դեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 դեղչով ետ կ'առնուին: Իսկ ապառիկ գնողներէն՝ 100ին 15 դեղչով:

ԱՄՐԱՆ ԱՌԹԻՒ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը զովացնէ, իսկ քիչը կը քրտնցնէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ընողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ Չինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քաւր, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ զովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, ձէլալ պէյ խան, թիւ 10:

Մասնաձեւեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Յ. ՎԱՍԻԼԵԱՆԻ չորս տեսարակներու մէջ ամփոփուած Գրավարժութեաննոր դրութիւնը հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ գրավաճառաց:—Դին հատին 20 փարայ:

ԱՐԱՄԻՆ

52^ր ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 14

5 ԱՊՐԻԼ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրաբարի ջոշերը. ԽՄԲԱԳՐԱԿԱՆ :—Երուսաղեմի Յիսասակներ (Զասկի առքիւ) Մ. ՆԱ. ԹԱՆԵԱՆ :—Ինչպէս կը գրեմ. ԲՐԻԶԱՆԹԷՄ :—Կեանքը (Զասկի խոհեր) ՀԱՐՄԱԿ :—Աղ- ջըկան մը օրագիրէն քաղուած (Նորավեպ) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ :—Թաղժուլութիւններ (Բանաստեղծութիւն) ՏՕՄԻՆՅՈ :—Ասուածաճշական (Զասկի քմայք) ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐ- ՏԻԶԱԿՅԻ :—Ուրուագիծներ. —Վայրկենական. «Տիկին Զապէլ Եսայեան». ԳԱՄԷՐ :—Սի- փանի վարդերը (Հեքեաք) ԶԷՐԱՍԻՄ :—Փոխանցումը (Բանաստեղծութիւն) Մ. Ա. ՊԱՐՍԱՄ- ԵԱՆ :—Գերման Գրականութիւն. Վ. Գ. —Խմբագրական Նօթեր :

ԳՐԱԲԱՐԻ ԶՈՋԵՐԸ

Բանասէրներուն միտքը գրաւող օրուան կարեւորագոյն խնդիրն է՝ Ոսկեղարու Գրա- րարին վրայ երեւան ելած վիճաբանութիւնը : Խնդիրը նոր ըսուելու չափ թարմ չէ, և եթէ անոր խօսութիւններ հետ խառնուած չըլլային կարգ մը անհատական նկատումներ, պիտի չվարանէինք ըսելու թէ արեւին տակ նոր բան չկայ : Բայց քանի որ այդ անհատական հաշիւներէն մէկ քանին մինչև տասներկու և ուրիշներ մինչև տասներկու տարուան դոյու- թեան մը իրաւունք ունենալ կը հաշակ- ուին, Մասիսի խմբագրութիւնն ալ տեղի չտեսներ իր ընթերցողներէն ներս մտնողներ- լու իր պահած լուրթեանը համար այս վէճին առթիւ :

Անհատականութիւնը, ամէն խնդրի մէջ, տղեղ կերպարանք կու տայ վիճաբանու- թեանց, որքան ալ լուրջ ըլլայ անոնց նիւթը : Բարեբաղդաբար՝ մենք ճիշդ ա՛յն միջոցին միջամտել կը փափաքինք՝ երբ կը դիտենք որ արդէն ամէն բան ըսուեցաւ, ամէն հին տես- րակներ պրպտուեցան, ամէն կիրք տակաւ սպառեցաւ ու հանդարտեցաւ : Ուստի, կ'օգ- տուինք գրիչներու այս յարաբերական «գըր- չաղաղարէն» մեր թերթին ընթերցողներուն համարօտ դադափար՝ մը տալու համար խնդ- րին հիմնական կէտերուն վրայ :

Եթէ ճիշդ է մեր եղբակացութիւնը, ապէ տասներկու տարի առաջ երիցեանց ըսած է ե- ղեր թէ Վենետիկի Միլիթարեանք «ի հարկէ չվերադարձրին» մեր հայ մասնադրութեան Ոսկեղարը, կամ լաւ եւս մեր ոսկեղինիկ լե- դուն : Այս առթիւ ընդարձակ յօդուած մը երեւցաւ Բազմավեպի 1903 մարտի թիւին մէջ, Հ. Ա. Ղազիկեանի ստորագրութեամբ, և երեք յօդուածներ՝ Սուրհանդակի մէջ, Թաթուլ Վանանդայի ստորագրուած : Բիւ- ղանդիոն իր կարգին սկսաւ, և դեռ կը շա- րունակէ, յօդուածներու շարք մը՝ մեզ ամէ- նաժանօթ գրաբարեան Յ. Գուրգէնի կողմէ գրուած :

Բնականաբար, ինչպէս կը տեսնուի, գը- րաբարի ջոշերն են որ այս անգամ կը ջանան ապացուցանել թէ իրենք եւս համակիր են գրչամարտի մասնաւոր եղանակի մը՝ որուն դովաբանութիւնը ընկելու վարժուած չէին, և կամ մեզի սորվեցուցած չէին դովելու այդ մասնաւոր եղանակը :

Հ. Ա. Ղազիկեան պաշտօնան կը կանգնի հայ մեծ բանաստեղծ Հ. Ա. Բաղդասարեանի երկերուն, և կը դատէ որ անոր դործածած գրաբարին քով թերեւս վարմնար Ոսկեղար- եանը : Այս՝ առաջին կարծիքն է :

Թաթուլ Վանանդացի մեծարանք և հիացում կը յայտնէ Բագրատունիի տաղանդին, բանաստեղծի հանճարին, հայերէնագէտի հմտութեանը, բայց կուզէ յիշեցնել նաեւ թէ Ոսկեդարու գրաբարը տարբեր է Բագրատունիի գրաբարէն որ չկրնար բարձրագոյն, և ոչ իսկ հաւասար նկատուիլ Ս. Թարգմանչաց և անոնց աշակերտներուն ընտիր հայկաբանութեանը: Թաթուլ Վանանդացի կ'ըսէ.

— Եթէ Վենետիկեանք աղատեցին հայերէն լեզուն, Վիէննականք ալ գտան բուն Ոսկեդարեան գրաբարը:

Այս երկրորդ կարծիքն է:

Յ. Գուրգէնի վերջնական կարծիքը դեռ յայտնի չէ, որովհետեւ մինչև հիմայ իր յօդուածները աւելի վերաբերութիւն ունեցան վաղեմի ձառակ Ոսկեդէն Դպրութեան գրաբար հանդէսին պարունակութեանը հետ և անոր հետեւանքով զանազան թարգմանութիւններու բազմաթիւութեանց հետ: որոնցմէ կարելի չեղաւ դեռ որոշ և յստակ եղբակացութիւն մը հանել:

Ամէն բան, սակայն, ենթադրել կու տայ թէ այս վիճաբանութիւնը հազիւ սկսաւ. թէ, հաւանաբար, ուրիշ ականաւոր և հեղինակաւոր անձնաւորութիւններ պատիւ պիտի սեպեն իրենց՝ նոր զարկ մը տալու անոր և «մի անգամ ընդ միշտ» լուսաբանելու այս հարցը՝ որ մինչև հիմայ ապակեւորոն ընթացքի մը հետեւելով, գիտաւորի երեւոյթի նման տասը կամ քսան տարին անգամ մը մեր գրական հորիզոնին վրայ պըլպըլալու սովորած էր: Յուսանք որ այս անգամ վերջնական լուսաբանութիւնը պիտի չուշանայ և թէ ամէն ընթերցասէր անհատ, ինչ որ ալ ըլլայ իր գիտութեան աստիճանը գրաբարի վերլուծումներուն մէջ, պիտի կաւարենայ կատարեալ և ուղիղ համոզում մը գոյացնել՝ կարգաւոր թերն ու դէմը:

Այս առթիւ չենք կրնար չյիշել մեր Պոստայ հասարակութեան սիրելի անուն մը՝ որ կամաւոր մոռացութեան մը դատապարտեց ինքզինքը բազմաթիւ տարիներէ ի վեր: Բանասէր մը որ քառսուն տարի անդադար չըսալած է հայկաբանութեամբ, որ նշանաւոր քրտն է ինքզինքը իր հմտալից երկասիրու-

թիւններովը բառաքնութեան, քննադատութեան և գրչագրերու ընթերցման և վերլուծմանը մէջ. այդպիսի բանասէր մը սիրաւի կերպով պիտի ընդունուի մեր հասարակութեան կողմէ եթէ հաճի գրիչ շարժել ներկայ առիթին մէջ՝ որ առիթներուն յարմարագոյնն է: Հարկ չկայ, կարծենք, ըսելու թէ Նորայր Բիւզանդացիին կ'ակնարկենք:

Նորայր Բիւզանդացի բազմաթիւ բարեկամներ թողուցած է մայրաքաղաքիս մէջ՝ ուր ասիէ գրեթէ քսան տարի առաջ աշխատեցաւ իր հոյակապ Բազմիրքին հրատարակութեանը և իսկոյն անհետացաւ, թողլով այդ Բազմիրքը իբր միակ յիշատակ ամէն անոնց որոնք գիտեն օգտուիլ արժանաւոր և շատ գնահատելի երկասիրութիւններէ:

Հետեւաբար, Մասիսի խմբագրութիւնը ջերմապէս կոչում կ'ընէ Նորայր Բիւզանդացիի աշխատակցութեանը՝ ներկայ բանավէճերուն առթիւ, այն համոզումով թէ իր ընթերցողները իբր հաճելի անակնկալ մը պիտի ընդունին հմուտ բանասէրին երեւումը մեր գրական — բանասիրական հորիզոնին վրայ և թէ իր բազմաթիւ բարեկամները ուրախ պիտի ըլլան, իր անուան կրկին տեսութեամբը, վերանորոգել այն համակրանքի յիշատակները զորս թողուցած է անոնց Նորայր Բիւզանդացի իր անձին ներկայութեամբը:

Յուսալից ենք որ բազմահմուտ բանասէրը պիտի հաճի ընդունիլ մեր այս համեստ հրաւերը:

Ս. Պատրիարք Հայրը Զատիկի շնորհաւորութեան պաշտօնական այցելութիւնները պիտի ընդունի նոյն ատեն երկրորդ օրը, երկուշաբթի, ժամ 7ին, Աղգ. Պատրիարքարանի մէջ:

— Յովսէփ Իզմիրեանց Գրական Մրցանակի Յանձնաժողովին ներկայացուած երկասիրութեանց մէջէն կը յիշուին, առ այժմ, Սմբատ Վրդ. Սատեթեանի «Ներսէս Լամբրոնացի»ն որուն քննութիւնը յանձնուած է Ռէթէոս Էֆ. Պէրպէրեանի, և Խաչիկ Էֆ. Լեւոնեանի «Աղթամարայ Կաթողիկոսութիւն»ը:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

(Զ Ա Տ Կ Ի Ա Ռ Թ Ի Ի)

Ամէն տարի ամբողջ մեծ պահքը, և նոյն իսկ բոլոր ձմեռ՝ սովոր էինք յափշտակուած հետաքրքրութեամբ մը կարդալու Երուսաղէմ մէն եկած թղթակցութիւնները որոնք կը նկարագրէին գրեթէ ամէն լրագրաց մէջ՝ Ս. քաղաքին հանդէսները, տօները և արարողութիւնները։ Այս տարի դժբաղդաբար ճիշդ պահքի առաջին շաբաթէն սկսեալ անախորժ լուրեր միայն հասան անկէ։ Բայց որչափ ալ տխրադիւցիկ ըլլան պատահած իրողութիւնները, առժամայ տպաւորութիւն մը միայն թողած են անոնք, և չեն կրնար ջնջել իսպառ Երուսաղէմի և իր հայ Մայրավանքին նկատմամբ հայ հաւատացեալին ունեցած հոգեգրաւ զգացումները և սրտագեղ համակրութիւնները, ըստ որում այնպիսի անջնջելի հետք մը և անեղծելի դրոշմ մը թողած է Երուսաղէմ բոլոր իր նուիրականութիւնը ճանցողներուն մօքին և հոգւոյն վրայ, որ բացառապէս պատահած վաղանցուկ միջադէպեր, որքան ալ ցաւալի ըլլան, չեն կրնար տեւական հետք մը ձգել ու հակալընդէ կամ չէղորդացնել դարերէ ի վեր գոյութիւն ունեցող համակրանայ արմատները և անոնց մշտադալար ընձիւղները։ Ուստի ինչպէս ամէն տարի նոյնպէս և այս տարի, ներկայ Աւագ շաբթուան մէջ, Երուսաղէմի յիշատակներ քրքրել քաղցր ու հաճելի պարտք մը կը համարինք, տողորուած անայլայլ կերպով այն միեւնոյն զգացումով զոր ունեցած ենք միշտ և զոր պիտի ունենանք առ յաւէտ, առանց երբեք ազդուելու պատահական դէպքերէ, հաւատալով թէ անոնք կ'անցնին, իսկ Երուսաղէմ կը մնայ միշտ նոյնքան նուիրական որպէս եղած է ամէն ժամանակ։

Զի, մոռնալու չէ թէ Երուսաղէմ ինչպէս որ աշխարհի ամենահին քաղաքներէն մէկն է, նոյնպէս ամենէն աւելի զայն յարգող ժողովուրդներուն մէջ մեր ունեցած ուխտատեղիներու բաժինն ալ առաջնակարգներէն է,

սկսեալ Գրիստոնէութեան ամենահին դարերէն մինչև հիմայ։ Այնպէս որ Ը. դարու պատմիչ մը, Անատոսաս, յականէ յանուանէ կը յիշէ մի առ մի թէ Հայերը 73 վանքեր ունեցած են եղեր այդ ժամանակները Երուսաղէմի մէջ և շրջակայքը, ամէնքն ալ չէն ու ծաղկեալ։ Վանքերու այդքան բազմաթիւ ըլլալուն պատճառն ալ չի մոռնար յիշել այդ միեւնոյն պատմիչը, և կ'ըսէ թէ իւրաքանչիւր հայ հարուստ ցեղ կրօնասիրական պարտք մը կը համարէր իրեն մասնաւոր վանք մը կառուցանել իր ծախքով Ս. քաղաքին մէջ, որպէս զի իր տոհմին պատկանող ուխտաւորները իրենց սեպհական բնակավայրն ունենային, վասն զի այն դարերուն մէջ պանդոկներ և վարձքով բնակելի օթեւաններ գոյութիւն չունէին. ուստի իւրաքանչիւր ճամբորդ ուխտաւոր եթէ իր մասնաւոր բնակավայրն ունենար՝ իր իսկ ցեղին կողմէ կանգնուած վանքի մը մէջ, ինքզինքը chez soi զգալու պէս բան մը կ'իմանար։ Գարձեալ այդ միեւնոյն պատմիչը կը յայտնէ թէ երբ Բիւզանդեան կայսրերէն պատկերաւորաւ եղող մէկը հրաման կ'ընէ Ս. տեղեաց հայ վանականներուն կա'մ համակերպելով՝ իր գաղափարին՝ ջնջել պատկերները եկեղեցիներէն և կամ ձգել մեկնիլ Ս. քաղաքէն, 500 հայ կրօնաւորներ լաւագոյն կը համարին թողուլ երթալ Երուսաղէմէն։ Ասոր վրայ վանքերուն մէկ կարեւոր մասը կ'իյնայ Յուսաց ձեռքը։ Այդ ժամանակի աւերակներէն մինչև ցայժմ իսկ պեղումներ կատարուած ատեն՝ բազմաթիւ հնութիւններ երեւան կուգան, գլխաւորաբար հին եկեղեցիներու, տաճարներու և վանքերու հետքեր, ընդհանրապէս ճոխ ու հոյակապ շինութեանց շքեղ մնացորդներ և գեղազարդ բեկորներ, որոնք չառ յատակ ու որոշ կերպով գաղափար կու տան թէ որքա՛ն պերճ և հոյատեսիլ եղած ըլլալու են բուն իսկ մայր չէնքերը։ Աստուգամէ Զիթհեւեաց լեւոյն վրայ 1888ին գտնուած մէկ եկեղեցիին յատակը, որ համակ խճանկարներէ (մոզայիք) կազմուած է և կը պարունակէ հայ գրով արձանագրութիւններ, ըստ ամենայն հաւանականութեան Զ. րդ դարու գործ, ինքնին միայն բաւական է պէտք եղածէն

աւելի հասկցնելու մեր նախնեաց կրօնասիրական զոհողութեանց, նիւթական ճոխութեան և գեղարուեստական ճաշակին չափն ու աստիճանը :

Այդ միեւնոյն կրօնասիրական ոգին և զգացումը միշտ անպակաս եղած են մեր ժողովրդեան մէջ, որ կրցեր է Ս. քաղաքին մէջ այնքան նուիրական գիրք մը գրաւել :

Եւ արդէն եթէ թուական համեմատութեան դիմենք, հայ քրիստոնէի ջերմեռանդութիւնն ու սէրը դէպի Քրիստոսի Ս. դերեղմանը՝ ամէն ազգերէն վեր կը տեսնենք զի ոչ մէկ ազգ իր թուոյն նայելով այնքան ուխտաւոր կը խրկէ Ս. քաղաքը, որքան Հայը, ինչպէս և ոչ մէկ Քրիստոնեայ հասարակութեան կրօնային իրաւունքները և ստացուածքները աւելի են Սուրբ Տեղեաց մէջ քան մերիկները, ժողովուրդներու թիւը և հարստութիւնը բաղդատութեան դնել չմոռնալով սակայն :

Այսքան սրտով ու հոգեով փարած ըլլալով Հայը Քրիստոնէութեան գերբնական Հիմնադրին և իր Տնօրինական սուրբ վայրերուն, դարերէ ի վեր քրտինք ու ջանք չէ խնայած փառաւորապէս ներկայանալու ի շարս բոլոր մրցակից քրիստոնեայ ազգերուն : Եւ ի պարծանս մեր նախնիքներուն պէտք է հպարտ ըլլալ թէ անյաջող ալ չէ եղած :

Աւագ Շաբթուան մէջ յաւէտ քան երբեք պէտք էր քրքրել Երուսաղէմի այս յիշատակները :

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

Ծ. Խ. — Յօդուածագիրը իրաւունք ունէր ըսելու, ակնարկելով Երուսաղէմի մեր վանքին մէջ պատահած վերջին դէպքերուն, թէ անոնք անցաւոր բաներ են որոնք հետք չեն թողուր : Եւ արդարեւ, Տ. Յարութիւն Ս. Պատրիարքէն Պատրիարքարան և Երուսաղէմատուն հասած նորագոյն հեռագիրներ կը ծանուցանեն թէ Միաբանութեան գործերը կարգին մտած են, ծանօթ վէճը վերջացած է և թէ ինք՝ Պատրիարքը՝ հանգիստ է այժմ :

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՐԵՍ

«Որքան ցանկալի պիտի ըլլար «մեզի համար՝ եթէ պէտք եղած «սարբեր ունենայինք՝ կարեւր «նայ դասաւորելու համար մեր «հին եւ նոր հեղինակներու մէջ «աւստոսութեանց եղանակներ «րու զանազանութիւնը» :

ԶԱՊԷՒ ԵՍՍԵՆԱՆ

(ՄԱՍԻՍ. ԹԻԻ 4. 1903)

Ճերմակ թուղթ, սև միւրաւ, բարակ գլորիչ : Ասոնց անմիջապէս քովի կը թաւ մը սուրճ—վարօ-ղլիֆօ. բաքէթ մը սիկաուէթ—կերկրորդ տեսակէն. և մանաւանդ պղտիկ փունջ մը ծաղկի, եղանակի ծաղիկներէն—ահա՛ ինչ որ կը փնտրեմ ամենէն առաջ՝ գլորելու համար :

Գաղափարներս՝ անկողնիս մէջ կը գլորենամ...faute de mieux :

Վարդերուն և խանութներուն պէս, խելքս առտունները կը բացուի :

Գաղափարներուս լուազոյնները անոնք են զոր կէս գիշերէն ետքը յղացած եմ, քունտանիլէ առաջ : Յղացումներու համար, ըստ իս, պատշաճագոյն տեղը՝ անկողինն է :— J'en sais quelque chose, կ'ըսէր ինծի ֆրանսացի բարեկամուհի մը, ընտանիքի պատուական մայր մը, որուն հետ գրականութիւն կը խօսէինք անցեալ գիշեր :

Գրելը՝ թէ՛ դործ մը և թէ՛ հաճոյք մըն է ինծի համար : Օրին մէկը կրնայ դործ մը ըլլալէ դադարիլ, բայց մինչև ետքը ձգմարիտ հաճոյք մը պիտի ըլլայ անիկայ :

Օրը օրին գրող մը, Աստուծոյ պատուէրին համեմատ, վաղուանը երբեք չեմ մտածեր : Եկող շաբթուան գրելիքիս վերնագիրը այսօրուքնէ կրնամ գիտնալ, բայց ամբողջութիւնը երբե՛ք :

Ինչպէս ամէնուն, նոյնպէս ալ ինծի համար ներշնչումի վրայ է խնդիրը : Ուղեղէս աւելի սրտէս կը բխղին գեղեցիկագոյնները ներշնչումներուս :

Տարօրինակ թերեւս երեւայ, սակայն ճշդ-

մարտութիւնը սա է թէ արեւը, լուսինը, սո-
խակը, ծառերը, վտակը, բնութիւնը համակ
սանկ ըսեմ, երբեք բան մը չեն աղդած ինծի:

Միւսէ, Վէրտի, Տիւմա Որդի, Բուչչինի,
Ֆրանսուա Փօթէ, օրինակի համար, շատ ա-
ւելի ներշնչումներ տուած են ինծի, քան
դարնան առաւօտ մը, լուսնոտ գիշեր մը,
փրփրադէզ ծով մը և ապուշ-ապուշ քնացող
լճակ մը:

Երբ երկինք կը նայիմ, հովանոցս առնե-
լու կամ չառնելու համար է. օր մը չեմ օգ-
տուած անոր հմայքէն:

Անձրեւը՝ երկրին կեանք տուող, բերրի-
ութիւն առաջ բերող, երկնապարգեւ բան մը
կը նկատեն ուրիշները: Ինծի համար՝ անձ-
րեւը հեղուկ մըն է որ ցելս կը շինէ: Եւ
ըսել թէ մարդիկ կան որ ասոր վրայ բանաս-
տեղծութիւններու հատորներ գրած են:

Նորութեան, յուզմունքի սիրահար՝ արեւը,
լուսինը և երկինքը կապոյտ, բան մը չեն
ըսել ինծի, որովհետեւ հարիւր հազար տա-
րիներէ ի վեր միշտ միեւնոյնն են և միեւ-
նոյնը պիտի ըլլան ասկէ ետքն ալ:

Ուրիշներ կը կարծեն թէ պատմութիւն մը
ընելու համար նախ արեւին ճառագայթները,
և կամ գիշերուան պերճուհին նկարագրելու
են: Ընտրօր ալ չեն ձանձրանար:

Ատոնք օր մը մտքէս անցած չեն և ասոր
համար է որ դրուածքներուս մէջ բնութեան
տարրերը տեղ չունին:

Կեանքը, այդ ամէն օր փոխող ճիւղը,
այնքան առատ նիւթ կը մատակարարէ մեզի
որ օդին, ջուրին նայելու ժամանակ չի թո-
ղուր:

Այլամ և Եւա նորածին բնութեան ծո-
ցին մէջ գտան իրենք զիրենք, ըմբոյսեցին
ամբողջ հրապոյրը դրախտին, ուր ամէն բան
թաղմ էր և գեղեցիկ, սակայն նորէն տող
մը ոտանաւոր չեն գրած: Կեանքին անու-
շտութիւնը ուրիշ տեղ փնտռեցին անոնք և
յանցանքը իրենցը չէ եթէ en flagrant délit
բռնուելնուն համար դուրսնետուեցան անկէ:

Աստուած ամէն բան տուած էր անոց,
բայց paravant մը որու ետին կարենային
երգել ամենէն քաղցրը բանաստեղծութիւն-
ներուն:

Փոխանակ երկնքի երեսը նայելու, կնկան
մը երեսը կը նայիմ և կը փառաբանեմ զԱստ-
ուած:

Կնոջ մը, մանաւանդ սիրուած կնոջ մը
դէմքին վրայ, արեւ ալ կայ, լուսին ալ
կայ և բոլոր մնացածները:

Հետեւաբար, ես գրելու համար բնու-
թեան չեմ դիմեր, ասոր համար թերեւս ա-
ւելի դրական եմ քան ուրիշները:

Ուրիշին ըսածները կրկնելէ կը խորշիմ և
կը ջանամ միշտ նոր բան մը ըսելու... թէ և
ամէն անգամ չի յաջողիմ:

Երկար յօդուած գրելը ընթերցողներուն
համբերութենէն բան մը գողնալ է ինծի հա-
մար:

Այն հաճոյքը զոր գրելու մէջ կը գտնեմ
եւ, կուզեմ որ ընթերցողս կարդալուն մէջ
գտնէ: Ասոր համար է որ ընթերցողներուս
և իմ մէջս մտերմութեան և համակրութեան
կապ մը կայ:

Գործերուս ամենէն անաչառ, անկողմնա-
կալ քննադատը ես ինքս եմ: Զի հաւանա-
նեւս ուրիշին չեմ հրամցներ:

Բաւական է որ նիւթ մը ունենամ գըլ-
խիս մէջ: «Խնչպէս պիտի գրեմ»ը մտքէս
չանցնիր: Անգամ մը որ գրասեղանիս առ-
ջեւն եմ և գրիչը ձեռքս, իրարու ետեւ կու-
գան գաղափարները. լմնալէն ետքը, ան-
գամ մը կը կարդամ, եթէ հաւնեցայ՝ լա՛ւ,
ապա թէ ոչ՝ կը պատուեմ:

Կեանքիս մէջ յօդուածի մը մաքուրը չեմ
առած բնաւ:

Ամենէն դժուարը ինծի համար՝ յօդուածիս
սկզբնաւորութիւնն է: Զեռագրի թուղթե-
րուս թիւ 1ը կրնամ քսան անգամ պատուել
նետել. բայց առաջին էջէն գո՛հ մնալէս ետ-
քը, թիւ 2ը և յաջորդները այդ վտանգէն
զերծ կը մնան:

Երբեք մտքէս չեն անցնիր այն ընթեր-
ցողները որոնք կրնան յօդուածներէս բան
մը չի հասկնալ: Tant pis pour eux:

Ընթերցողներս ինծմէ աւելի խելացի,
աւելի ուշիմ, աւելի բանդէտ կը նկատեմ
միշտ:

Ահա՛ ինչու երբեմն, նոյն իսկ ստէպ,

Ֆրանսերէն բառեր կը գործածեմ որոնք չաւ
մը գանդատներ առաջ կը բերեն :

Հայերէն գրելու համար միշտ ձեռքիս
տակ ունենալու եմ նուագարեանի բառարանը :

Պահեստի ձեռագիր երբեք չունիմ : Գրե-
լուս պէս՝ սպուկելու է : Անհամբեր եմ :

Շողոքորթ complimentներէ աւելի կը
սիրեմ անկեղծ քննադատութիւնները :

Համոզումս չեղող բան մը դրի չեմ առներ :

Նախանձոտներէ չեմ վնասիր և հիացում-
ներէ չեմ չփանար :

Ինծի համար գրելը հաճոյք մըն է , ըսի .
և այսպէս պիտի ըլլայ որքան ատեն որ ու-
րիշներուն համար հաճոյք մը ըլլալէ չի դադ-
րի գրածս կարդալ :

Գրականութեամբ rentեւեր կարենալ չի-
նելու պատրանքը չունիմ . բայց գրական ա-
պացոյցներ ունիմ կարծելու թէ այսուհետեւ
մեր լաւ գրողները մարդու պէս , կամ դէթ
մանկապարտեմանի պէս պիտի կրնան
ապրիլ :

Պատուաւոր , անկախ արուեստներու հար-
գէն է գրականութիւնը , բժշկութեան , փա-
տաբանութեան պէս և ես սա հաւատքը ու-
նիմ որ , մօտ ապագայի մը մէջ՝ մեր գրա-
դէաները շատ փայլուն տեղ մը պիտի գրա-
ւեն ընկերութեան մէջ :

ՅԲԻԶԱՆԹԷՍ

ԱՆՏԱՆԵՐԸ

(ԶԱՏԻԻ ԽԱՀԵՐ)

«Նս կենդանի եմ և դուք կենդանի լինելոց էք»

Աւագ եօթնեկի մեր հոգեկան յուզում-
ներուն մէջ , մխիթարական չէ՞ լսել այն ցըն-
ծուն ձայնը որ կեանքի ղուարթ արձագանդը
կը բերէ մեզի :

Ինչ է այդ նորանշան կեանքը դոր ունի
Յիսուս , և որով կ'ուղէ օժտել զմեզ , փա-
րատելով մեր խռովքն ու սոսկումը գերեզ-
մանին առջև : Արդեօք , բնութեան կեանքը
դոր գարունը շքեղօրէն կը ցուցադրէ , երբ
գալարիքը կը պճնադարդէ լեռն ու դաշտը ,
ծաղը տերեւներով կը պսակուի , ծաղիկը՝

թարմ ու գեղափայլ՝ իր քնքուշ գլուխը
կ'օրօրէ նուրբ ցօղունին վրայ , և թռչուն-
ները խնդազին կ'ողջունեն կապոյտին խորե-
րը : Կամ թէ՛ կեանքի այն փթթումը որ խան-
ձարուրի ժանկարներուն մէջ կը ծաղկի , կամ
այտերուն կարմիրը , աչքերուն բոցը երի-
տասարդ հասակին . — ոչ , ասոնք չեն արտա-
յայտեր այդ կեանքը : Վասն զի , բնութիւնը
կը մերկանայ իր ծաղիկ պատմութեան և ձմե-
րան ցուրտ պատանքովը կը սգաւորուի , թար-
շամած ծաղիկը կը թօթափէ իր թերթերը ,
որդեանհար ծառը սաղարթի պջրանքով մը չի
ղարդարուիր , ո'չ արեւի ձառագայթը , ո'չ
առաւօտի ցօղը ա'լ հրաւէր մը չեն տար իր
չորցած ճիւղերուն : Տղամարդուն առողջու-
թեան բոսորն ալ կը նսեմանայ , հուրքը կը
մարի և ոյժը կը սպառի :

Յիսուս այսպիսի ժամանակաւոր կեանքի
մը յայտնութիւնը չըրաւ , այլ լծանջնաւոր
կեանքի մը , գեղուն՝ յորդառատ կեանքի մը ,
դոր ինքը կ'ապրի , և դոր միայն ինքը կրնայ
տալ , վասն զի կենդանութեան գետեր կը
հոսին իրմէ :

Յիսուս «կենդանի եմ» կ'ըսէ ա'յն ատեն ,
երբ աշխարհը ա'լ պիտի չտեսնէր զինքը և
մահը կը սպառնար իրեն : Ո՞րքան ուշադրաւ
հակապատկեր մը կը կաղմին այն մարդիկ ,
որ պիլը բաղուններով՝ ընդիսօլ կը փարին
ներկայ կեանքի վայելքներուն : Իմաստունին
քաջատես աչքերը սքանչելի ճշգրտութեամբ
մը կը նկարեն այդ յուստես կենցաղատե-
րներուն հոգեկան մորմոքները՝ «Կարճ ու
ցաւագին է մեր կեանքը , և մահը անդար-
մանելի» : Կեանքի երեւոյթը այս անձուկ
տրամաբանութեամբ դիտողները խորունկ յու-
սահատութեան մը կը մասնուին , և կեանքը
վայելելու սաստիկ ծարաւը դայրոյցքի մը մո-
լեղնութեամբ կ'այրէ իրենց էութիւնը , որոնք
հաճոյքներու յաճումներէն խոնջ՝ սա երգը
կը մրմնջեն — «Եկէ՛ք , վայելենք եղած բարիք-
ները , պէսպէս գինիներով և անուշ իւղե-
րով լեցունք : Գարնան ծաղիկ մը թո'ղ
պարապ չանցնի . գեռ չթռումս վարդի կո-
կոններով պսակուինք» : Ինչ պատրանք ,
կարճատեսի մը միամիտ խոստովանութիւնը
չէ՞ . իրերուն վրայ չա'ս հարեւանցի արձակ-

ուած ակնարկ մը . կարօտը դժբախտ օրհասականի մը , որ հիւանդութեան անկողինէն դարնան շքեղութեան հանդէպ՝ կը զգայ թէ իր մոյնը կը քամուի , երակները կը ցամքին և մարմինը կը ծիւրի :

Մահաութայն տաքնապին մէջ չե՞ս փափաքիր , պէտք չե՞ս զգար լսելու՝ որոշ , հընչուն , զուարթ ձայնը Տիրոջ որ կ'ըսէ—«Ես կ'ապրիմ , ու դուն ալ պիտի ապրիս» : Ինչո՞ւ այդ տենդոտ վաղքը , զոր կը դնես գործունէութեանդ մէջ , ինչո՞ւ վայելքի այդ հրայրքը՝ սրտմաշուքը : Ինչո՞ւ այդ զգուշաւոր հոգածութիւնը սուղջութեանդ մասին , ինչո՞ւ այդ յիմար ըզձանքը՝ որով կուզես թռչունի թեւեր ունենալ սաւառնելու համար , ինչո՞ւ այդ սուր սարսուռները մահուան հանդէպ : Այս ամէնը ի՞նչ կը նշանակէ , եթէ ոչ նոյն՝ թէ դուն կեանք կ'ուզես , կը բաղձաս յաւերժապէս ապրիլ :

Բայց եթէ քու էութեանդ մէջ միայն փնտռես անմահ կեանքի սերմը , չարաշար կը խաբուիս : Մարդկային բնութիւնը իր բովանդակ լրութեամբը , իր զգացումներուն , գաղափարներուն , կարողութիւններուն լիապարար համադրութեամբը չկրնար տալ այն անմահ կեանքը զոր յարուցեալ Յիսուս կը խոստանայ : Մտքին բարձրագոյն թռիչքները , արուեստին ստեղծագործութիւնները բարոյական մեծութեան ապահով պատուանդան մը չեն ընծայիր քեզ , եթէ կեանքդ Յիսուսի վրայ պաստաւաստուած չէ : Միթէ կեանքը հաճոյքներու գերեզմանոցին մէջ է , որ փութութիւն և ապականութիւն կ'արտաշնչէ . հեշտանքի՞ն մէջ՝ ուր յաճախ կը գոնես յափառանք , ապաշաւ և մահաբոյր ախտերու ժահր թոյնը , ծոյլ՝ անգործ հանգիստի՞ն մէջ , ուր հոգեկան կարողութիւններդ կը խամրին : Կեանքի այդ բազմազան երեւոյթները , բուն կեանքին առկայծ ցոլքերը , մարմնածառաւ գայթններն են միայն , որոնք եթէ չխմբուին աստուածային ճառագայթի մը շուրջը , որ Յիսուսն կը ծագի , իրական վառարան մը չեն չիներ՝ ջերմութիւն բաշխելու համար մեր էութեան :

Քրիստոնէութեան ամէնէն լուսաւոր կողմը՝ իր կենագործող յատկութիւնն է . բուն

կեանքը իր ճշմարտութեան զարգացումն է մեր անձին և գործին մէջ , և իր սկզբունքներուն վրայ շինուած կեանքը ամէնէն բաղձալի իրականութիւնը , ամենաբարձր տեսականն է հոգիին : Մի՛ հաւատաք անոնց որ գործօն կեանքին պահանջումները չեն հաշտեցներ աւետարանական կեանքին հետ . այդպիսիները ամբողջ քրիստոնեայ քաղաքակրթութեան դէմ կը մեղանշեն : Սողոսկող կեանքերն են որ այս հովիտին անցքերուն միայն ուշադիր՝ աչքերնին չեն կրնար բարձրացնել դէպի երկնային իրականութիւնները : Երկնքին կայծերը չեն խանդոտեր իրենց հիւծուած հոգիները :

Հաւատքին սեռնութիւնը , փորձառական իրականութեան մը , արտաքին նշաններու , տեսանելի երեւումներու չի կարօտիր : Քրիստոսի գերեզմանին պահապանները չտեսան փայլակնաձև լոյսը որ զայն կ'ողողէր : Յիսուս հոգեկան հայեցումի մը մէջ կ'երեւի : Այն հաւատքը որ իր հետ եղած հաղորդակցութեան կը բխի , սեպ և բարձրահայեաց ժայռի մը պէս հաստատուն է և անդդուելի , որուն ստորստը կուգան կը փշրուին տարալոյսի յարածուփ ալիքները : Եթէ Յիսուս կենդանի զօրութիւն մըն է , հաւատքի կաթիլ մը աւելի կ'արժէ քան խմաստասիրական բոլոր դրութիւնները :

Յիսուս «կ'ապրիմ» կ'ըսէ , երբ ամէն բան իր շուրջը մահուան օրէնքին կը հպատակի : Այդ կենդանի ձայնը սրտերնուս փակ խորշերէն ներս կը թափանցէ , կը հալեցնէ բոլոր մտահոգութիւնները , գձձութիւնները , կեանքի նոր ոյժ , նոր ախորժ մը կ'արթնցնէ , կենդանութեան նոր երգ մը կը խլէ շրթներէն :

Ո՛րքան կենսատու են այն ճառագայթները որ յարուցեալ Յիսուսի նայուածքէն կու գան գերեզմանին վրայ : Ո՛չ ևս մթութիւն , ո՛չ ևս տարակոյտ . մահը վերածնութիւնն է : «Կենդանին յաւիտենից» գարերու մէջէն կը խօսի , կը զգանք իր բարերար ներկայութիւնը : Յիսուսի կեանքը մեր կեանքն է ու մեր անմահութիւնն է իր Յարութիւնը :

ԱՐՄԱՇ

ՀԱՐՄԱՆ

ՔԱՂՇՈՒԹԻՒՆՆԵՐ

— Երեսնո —

Այն օրը որ մենք գտնուեցանք իրարմե, Դիսե՛ս, քսիր ինձ քե սերը լոկ բառ մ'ե, Բառ մը հեշտին որ կը ծընի ոչինչեմ եւ զոր մարդիկ անգըքօրեմ կը ջնջեն :

Եւ դալկահար սեւ աչքերդ որ յաւեհ Ուխտած էին ինձի կեանք մը սիրաւեհ Արցունքներու մեջ մարեցան . մինչդեռ ես Դոն կ'ըլլայի ազատելուս վիշտերէս :

Բայց հիմա որ հեռացած ես ինձմէ դու վիշտս մոյնն է եւ Հիմ քսեր զայն մարդու կը տառապիմ դառնօրեմ ու մեկուսի Սիրոյդ դեմ զոր անմտօրեմ կորուսի :

Ձի այն բառը զոր խելովըդ կանացի Սեր կոչեցիր եւ ես ջնջել ջանացի, Օր օրի նոր բառեր ծընաւ հեշտօրօր, Երգելով քու մարմնոյդ գեղը անմուր :

Այդ բառերը եղան հիմա, եջ առ եջ, Ամբողջ գիրք մը որ կը մնայ սրտիս մեջ . Բեզ սիրելու համար բառ է որ միայն Յարգանքով ես քոթատեմ ու կարգամ զայն :

ՏՈՒՆՈ

ԽՄԲԱԳՐԱՆԱՆ ՆՕՐԵՐ

Բարեպաշտ ու գրասէր անձնաւորութիւն մը, հարուստ դասակարգէն, ինքնատիպ փափաղը ունեցած է գրաւոր քարոզներու մըր-ցում մը հաստատելու . և այս նպատակով դումար մը գրած է Ս. Պատրիարքին տրամադրութեան ներքե : Ամեն . Օրմանեան Սըր-բազան՝ ո՛չ միայն իբրեւ Պատրիարք, այլ նաեւ իբրեւ ամենէն պերճախօս քարոզիչը մեր կրկրին, կատարելապէս ձեռնհաս այս տե-սակ մըջումի մը կազմակերպութեան, շրջա-բերականով մը հրաւիրած է եկեղեցական-ները՝ իրենց լաւագոյն քարոզները գրի առ-նել, մըջման կնիքարկելու համար :

Մըջանակները քանի մը ատիճանի բաժ-նուած են (500 ֆր., 200 ֆր., 100 ֆր.) և

պիտի որոշուին ու բաժնուին Յովսէփ Իդ-միրեանց Գրական Յանձնաժողովին կողմէ : Մեկեանսը, որ համետօրէն ծածկել կ'ուզէ իր անունը, որոշած է միանգամայն՝ ընտրե-լադոյն դատուած քարոզները հատորի մը մէջ ամփոփել ու հրատարակել տալ, իր ծախքով, ժողովրդեան համար :

— Պատրիարքարանի նորընտիր Ա. դոր-ծակատար Արիս Էֆ. Ֆէսճեան, որ Կալայէն մայրաքաղաքս եկած էր նախորդ չարթուան վերջը, իր պաշտօնին գլուխը անցած է : Տիգրան Էֆ. Տէր-Ներսէսեան իր թուղթերը յանձնելով յաջորդին, երկուշաբթի օրը մեկ-նեցաւ Պատրիարքարանէն՝ հրաժեշտ առնելէ ետքը դիւանապետներէն ու ամբողջ պաշտօ-նէտէթէնէն : Երեքշաբթի, Ս. Պատրիարք Հայրը Բ. Դուռը և Ապրիէի պաշտօնատունը երթալով, Ներքին գործոց և Գատական նա-խարարներուն ինչպէս նաեւ Պետական Խոր-հուրդի նախագահին ու Եպարքոսական Խորհրդականին ներկայացուց Արիս Էֆ.ն, իբրեւ գործակատար :

— Ծանօթ սեղանաւոր և Դադ. Ժողովի անդամ Գրիգոր Էֆ. Դարակէօղեան մարմ-նոյն ձախ կողմէն կաթուած ունեցաւ երեք-շաբթի օրը, փողոցին մէջ, և փոխադրուե-ցաւ իր տունը ուր կը դադմանուի : Թէպէտ լեզուն քիչ մը ծանրըցած է, բայց վիճակը երկիւղալի չէն դաներ բժիշկները :

— Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք Արքահամ Էֆ. Ֆրէնկեանի, իր դեռատի դուկին՝ Տիկին Օլիա Ֆրնարդեանի մահուան առթիւ որ դառն սուգի մէջ թողուց վշտահար ծնօղքը ու ամբողջ ընտանիքը :

— Մանգումեի Էֆեհար օրաթերթը կա-նոնի հակառակ չարժամ ըլլալով, երեքշաբ-թիէն ի վեր դադրած կը մնայ՝ Տպագրական Տեսչութեան հրամանով :

Յաջորդ թիւով

ԽԱՐՈՂ. ՆԱՅՈՒԱԾՔԸ

(ՆՈՐԱՎԷՊ)

ՏԻՊԻՆ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆԷ

ՈՒՐՈՒԱԳԻԾՆԵՐ

(ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ)

ՏՐԱԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

Առաջին հանդիպումով, առանց զինքը մօ-
տէն ճանչնալու, աւելի ուսանող աղջիկ մը
սկստի կարծէիք՝ քան ամուսնացած կին մը,
այնքան սպարդ է իր շնորհալիութեանը մէջ
ու այնքան ծաղկատի:

Իսկիւտար ծնած ու Բարիդ դաստիա-
րակուած, այս երկու ներհակ միջավայրերու
բարքերէն լաւագոյնները իւրացուցած է,
ժիր ու ընտանեակէր Հայուհի մը ձիւքերուն
միացնելով զարգացած միտք մը և գրական
ու գեղարուեստական նուրբ ձաշակներ: Երբ
իր հայերէն առաջին յօդուածը հրատարակեց
այս տարուան սկիզբը, Մասիսի մէջ, ուր
յայտնութիւն մը եղաւ դրեթէ, արդէն իսկ
անուն մը ու տեղ մը ունէր Փրանսերէն մէջ—
երկու դուռ դրական Հանդէսներու մէջ, ուր
վաղուց կ'ընդունուին ու կը գնահատուին
իր վիպական ու բանաստեղծական գրուածք-
ները: Ասկէ, թերեւս, իր մէկ եղականութիւնը՝
«Փրանսերէն մտածելու և հայերէն
գրելու» ինչ որ բան մը չի պակսեցներ իր
ոճին գեղեցկութենէն ու սլափուածքին հը-
րապրէն: Ընդհակառակը:

Մանկամարդ գրագիտուհին քիչ մը ժա-
մանակի կը կարօտի ժողովրդական գրող մը
դառնալու համար մեր մէջ. նախ որ, գեռ
չորս յօդուած միայն հրատարակեց, թէեւ
այդքանով իսկ համակիր ուշադրութիւն մը
գրաւած է գրասէր դասակարգին կողմէ: Եւ-
տոյ, քօղարկուած, մշուշոտ—թէեւ ըլլայ
գարնան աղուոր մշուշը—բան մը ունին կար-
ծեա իր յօդուածները, եւրոպական գրակա-
նութեան ընտել միաքերու համար գրուած:
Ասով հանգերձ, է'ն պարզ ընթերցողն ալ
սխտրով կը հետեւի իր սիրուն սարբերու-
թիւններուն ու կը հետաքրքրուի հետզհետէ.
միայն թէ, վերջին տողին, սրահ մը կանգ
կ'առնէ, ճիգ մը կ'ընէ՝ ամբողջութիւնը ամ-

փոխելու, գրուածքին հոգիին թափանցելու
համար, ինչպէս սովորութիւն է ըսել:

Մէկ—երկու տարուան մէջ, եթէ չարու-
նակէ կանոնաւոր աշխատակցութիւն մը հայ
թերթերուն,—վասն զի իր գրուածքները
մի միայն Մասիսին համար monopoliser ը-
նել փափագելու եռասիրութիւնը չունինք,—
մեր գրագիտուհիներու առաջին շարքին մէջ
պատուոյ տեղ մը սկստի գրաւէ, լիովին ծա-
նօթացնելով իր տաղանդը ու կարողութիւնը:
Այն առեւն ալ սակայն, ինչպէս հիմայ, յա-
ջողած ըլլալու յաւակնոտութիւն ու գրագի-
տական նախանձ ըսուած բաները գոյութիւն
չսկստի ունենան իրեն համար, իր յատկանի-
չերն ըլլալով համեստութիւն ու անկեղծու-
թիւն:

Առանց «սալօնի կին» մը ըլլալու, ունի
խօսելու յատկութիւն մը, գրաւիչ, շահեկան
ու սրամիտ, որ իսկոյն կը զգացնէ գէմինին,
եթէ ան ալ զարգացած մէկն է, թէ թերուս
տիպարի մը հանդէպ չի գտնուիր: Աւելցու-
ցէք ասոր վրայ ձայնի մեղմութիւն մը ու
չեղտի անուշութիւն մը, կանխահաս մեղամաղ-
ձոտութեամբ մը սարուրուած, որ հրապրէ
դուրիչէ, և դադարի մը սկստի կազմէք Տի-
կին Զատէլ Եսայեանի վրայ:

Այս ուրուագիծը թերի պիտի մնար, եթէ
չաւելցնէի թէ մանկամարդ գրագիտուհին ա-
մուսնացած է երիտասարդ արուեստագէտի
մը՝ Տիգրան Եսայեանի հետ,—եղբորորդին
մեր վաղածանօթ բանաստեղծ «Էմմա»ին,—
վիպական, սիրային ամուսնութեամբ մը: Ու
հիմակ, Օրթագիւղ, հօրենական տանը մէջ
հաստատուած, իտէպ աւով մը կը կազմեն,
այլը իր վրձինին ու կլինը իր գրչին բոլորա-
նուէր:

Գ.Ա.ՄԷՐ

ՍԻՓԱՆԻ ՎԱՐԴԵՐԸ

(Հ.Է.Ք.Ե.Ա.Թ)

Մրտօ շատ կանուխէն որբ մնացած էր,
իր պատուուած չապիկին մերկութեանը մէջ
աղտոտ գոգոտ աղայ մը՝ որուն գլխուն մա-
ղերը կերուած էին աղտոտ օրդերէ: Տէր-տի-

բական չունէր, բացի քեռիէն, որ իրենց գեղին գլխին էր: Մրտօ տարապարհակ բռնուած սպասաւոր մը եղաւ անոր մօտ: Եւ իր հօվիւր լեռնային կեանքը վարժեցուցած էր զինքը անանկ չարքաշութեան մը, ուր ինքը ուժի տեսակէտով կը մրցէր իրեն յանձնուած գոմէշներուն հետ: Այն բոլոր անոք տղաքներուն պէս, որոնք աշխարհի մէջ ունէ կապ մը չունենալնուն պատճառաւ դառնուսնութիւն մը նկարուած կ'ըլլայ իրենց դէմքին վրայ, մեղամաղձօրէն կը նայէր իր շուրջիններուն, իր գեղի միւս մարդերուն, որոնք իր կեանքին բաղդատմամբ, աւելի շատ օժտուած էին բնութեան լիառատ պարգեւներով: Իր ագեղութիւնը, իր անխնամութիւնը և իր լքումները չարացուցած էին զինքը: Երբեք անուշ բառ մը չէր լսած անիկա, և երբեք քաղցր նայուածք մը չէր թափանցած իր մերկ՝ արեւէն փոթ փոթ եղած, պատանիի կուրծքէն ներս: Երէնքու ետեւէն անխոնջ վաղքէ մը վերջ, երբ իրիկնամուտին պարապ ետ կը դառնար նախիրին մօտ, իր որսորդի անզուսպ խօս փափաքը կը յադեցնէր խարաղանկով այն գոմէշները, որոնց պահպանութիւնը իրեն յանձնուած էր:

Գլխը տեսաւ թէ աղուէս մըն էր այն զոր իւր պահապան դրած էր իր հաւնոցին: Մրտօի գործած աւերումը՝ խոտոր կը համեմատէր իր հովիւի պարտականութիւններուն հետ:

Ուրիշ հնար չկար. զանի վտարեց իր քօվէն:

Հիմակ, ա'լ իրմէն հաշիւ պահանջող մը չկար աշխարհի մէջ, ու չկար բըշակ մըն ալ, ուր ձմեռ գիշերները իր գլուխը հանդէպէր: Լեռներու վայրենութեանը վարժուած տղան թափառաշրջիկ մը եղած էր պարզապէս: Փարխինի ծորձորներն ու ծմակները ամենէն հեշտ ապաստանարաններն էին բնութենէն անժառանգուած ու մարդկութենէն վտարուած այդ տղուն:

Այն մարդերուն պէս, որոնք բռնաճիգ թափով մը կը փորձեն բնութեան առթած զրկումները սրբագրել և անոր ժլատութիւնը դարմանել կրցածնուն չափ, Մրտօն հիմակ ա'լ առջի տղան չէր. որք' լքուած հովիւր, հիմա

լեռներուն մէջ կը շրջէր՝ քաջարի որսորդ մը եղած: Անժառանգներուն բարեկամն էր միշտ, որովհետեւ կանուխէն ինքն ալ զգացած էր անողոք դժբախտութիւններու կրօնկիծը:

* * *

Սարգիս՝ հարեւան գեղի մը պարկեշտ հօղադործն էր, հայր՝ մէկ հատիկ աղջկան մը, որուն գեղջնակ համեստ գեղեցեցութիւնը ամէնուն ուշադրութիւնը իր վրայ հրաւիրած էր այդ լեռնոտ գեղերուն մէջ: Աղջկան մը գեղեցկութիւնը ամենէն մեծ պատիժն է երբ սիրային առեւանգումները ամուսնութիւններու ամենէն կարճ ճամբան կը նկատուին: Սարգիս այդ պատուհասին կսկիծը կուլար շարունակ, արգահատանքի փղձուկով մը նայելով իր անմեղ աղջնակին՝ Վարդենիի վրայ: Այս վերջինը ներքին սոսկումով գիտակցութիւնը ունեցած էր իր դիրքին ու իր կացութեանը, որուն վրայ չէր մտածեր ալ, և կը սպասէր կարծես այն ցաւագին վայրկենին ուր իր բախտը պիտի վճռէին զինքը հետապնդողները:

Իր այդ մտածկոտ օրերէն մէկուն, Մրտօ ինքզինքը դէմ առ դէմ գտաւ Վարդենիի, երբ այս վերջինը՝ իր հոգիի ներյոյգերէն մազնիւտացած՝ իր լայն բիւրերը յառած կը նայէր հորիզոնի կապոյտներուն, ցրդիկ մը հովանիին տակ փռուած: Մետաղէ սրտերուն միակ ու ապահով հայոցը աղջկան մը սիրան է: Առջինեկ սէր մը կը գործէ այն մեծ հրաշքը, ուրկէ քառութեան մը պէս արցունք կը հոսի: Կեանքը կը կերպարանափոխուի անըզգաներուն մէջ. և ամենէն անպարկեշտ անձը կրնայ մարդկութեան ուղիղ ճամբուն առաջնորդուիլ: Չես գիտեր ի՞նչ թաքուն խորհրդով բնութիւնը պարզ ու տխուր աղջկան մը սրտին մէջն է դրած այդ գերազոյն ուժը:

Մրտօ այդ մեծ ծանրութեան տակ ջախջախուած զգաց ինքզինքը:

Ատկէ առաջ երբեք վայրկեան մը չէր ունեցած իր ներսը անթեղուած զգացումները քրքրելու համար: Երբեք Վարդենիի նայուածքին պէս ճառագայթում մը չէր խօսած իր

սրտին : Երկատարդին ներքին ալբ. բովանդակ քայքայումին հանդէպ անդգայ դըռնուած էր աղջիկը , որովհետեւ ապահովութեամբ դիտէր թէ իր ճակատագրին վճիռը իրմէ դուրս ձեռքերու մէջ կը գտնուէր : Ունոյն իսկ աղջկայ այդ անդբաղ մտամոլորութիւնը , տարտամ նայուածքի մը այդ երկնարոյր անուշը , ցրքուն մազերու մէջէն ծըփացող սիւքը , կը ձգտեցնէին իր լարած սըրտին զապանակը , որ մինչեւ այն ատեն տարբեր տենչանքներու , տարբեր սէրերու համար դորձած էր : Մրտօի մէջ մեռած սեռային սէրը նոր բողբոջումներ կը ծլէր պարկեշտութեան մը բովանդակ հրայրքին մէջ :

Առեւանդուած էր աղջիկը :

Բայց այդ առեւանդումը իր ետեւէն բերած չէր կուսապղծութեան մը դարչանքը : Մրտօ կը զգար , կուղէր զգալ թէ հարկ է Սարգիսի ալ հաճութիւնը ձեռք բերել , ամուսնութենէն առաջ . և առեւանդումի կրակիծը մեղմել գնումի մը փոխարինութիւնով : Բայց Վարդենի ամենգին ապրանքներէն չէր բնաւ . իր հօրը աչքին՝ բաղմամբութեան թեկնածուները հետզհետէ արժէք մը աւելի բարդած էին այդ կենդանի—միտին վրայ :

Հեռու տեղերէ սակարկութիւնը սկսուած էր արդէն : Մրտօ կը խորհէր , թէ կապոյտ երկինքէն , անտառներու հովանիէն և իր բռնկած սրտէն զատ բան մը չունէր Վարդենիին տակիք , իսկ Սարգիսի՝ իր սեպհակաճութիւնը եղող կոտոր մը հալին գինը :

Ճամբայ ելան երկուքն ալ :

Բայց ճամբաքից , իրենց ամէն մէկ քայլախիտին , Վարդենիի միւս սիրահարներուն կը հանդիպէին : Եւ ամէն հանդիպում պայքարի մը ծնունդ կուտար :

Մրտօ վերջապէս յաղթած էր ամէնուն . . . նոյն իսկ Վարդենիի սրտին :

* * *

Պահ մը հանդէսէլու համար՝ դէպի Սիրիանի Խէլաթ ուղղուեցան :

Վարը՝ Նփրատ կը վժար ապառաժներու ծոցէն , և իրենք՝ ամալութեան գիրկը՝ երկինքի ու խաղաղութեան անճառուէր , զի-

րար կը դիտէին յոգնած աչերով : Ժայռին ճիշդ միջինքը , ուր մարդկային ոտք չէ կոխած բնաւ , կը ցցուի հինաւուրց ծառի մը քարացած կոճղը , հո'ն քարերուն գիրկը նեւտուած աղէղի մը պէս :

Բոյնէն փախած եղջերու մը եկաւ հիւզալ մօան այն քարայրին ուր երկու մշտաթեւն սրտերը կը տրոփէին : Մրտօ իր հրացանի փողը անոր շտկեց՝ Վարդենի , սակայն , չթողուց որ իր ապագայ—ամուսինին գնտակը մխուէր անմեղ կենդանիին սիրտը : Մրտօ թողուց հրացանը , և յանկարծ խոյացաւ կենդանիին վրայ , ու ողջ բռնեց զանի : Բայց աղջկան գութէն փրկանաւորուած եղջերուն , ուժով մը խիթկեց Մրտօն , որ գլտորեցաւ գահավէժ անդունդէն , և գնաց միտիլ Սիրիանի Խէլաթի միջինքը գտնուած հինաւուրց կոճղին :

Իր կողէն հոսող արիւնը կը ջրվէժէր , և երկու սիրահարներու լալկան հառաչանքը ողբերէն ամենէն կծուն , ցաւերուն ամենէն կսկծուն էր որ կուլար բարձրաձայն : Սիւլանի բանաստեղծութեան ամենէն գունագեղ *mélodie*ն ցայսօր տխրանուշ չեղտերով կ'եղանակէ այն լացի և ողբի արցունքները , զոր երկու սիրահարները թափեցին ամբողջինը ժամեր , մէկը ծառի կոճղին գամուած , ու միւսը իր սիրականին մահովը մեռնելու պատրաստ : Լացի այդ սրտաթեւնդ հիւսուածքէն տղան կ'ափսոսար շարունակ այն վտանգները , ուրիշ միայնակ անցնելու հարկադրուած էր խեղճ աղջիկը , որ՝ ո'վ գիտէ , պիտի կրնար արդեօք ապահով իր տունը հասնիլ , անպաշտպան և անօգնական :

Վարդենի իր սիրականին մահէն վերջ ա'լ ապրելու ուժ չէր զգար իր մէջը , իրեն համար ամենէն փափաքուած կեանքը մահուան մէջ իր սիրելիին միանալն էր միայն : Մրտօի հոգեւթարքի վերջին հռչակները քարերը կը պատէր , ու անոր նուազկոտ աչքերը անլսածան կը մնային Վարդենիէն , երբ արցունքի վշտերէն պատուուած աղջիկը , ինքզինքը վար կը նետէ ժայռէն , և կերթայ գամուիլ այն միեւնոյն կոճղին , ուր սիրականին տալիս տաք մարմինը կը հեւար : Երկու մահամերձներու ամուսնութիւնը տօնեցին Սիրիանի սարերը , և Նփրատ իր գելգելին խառ-

նեց անոնց հառաջանքին կոծը, երբ վախէն սրացող եղջերուն քարերու կատարէն կը դի-
տէր այդ սիրային վախճանները, հեւքոտ
վազքէ մը վերջ կանգ առած:

* * *

Ասոնց մահէն ի վեր, Սիփանի ժայռին
կտրուած կողմին վրայ, որ Սիփանի Խէլաթ
կը կոչուի, այդ հինաւուրց՝ քարացած ծառի
կոճղին մօտիկ երկու վարդեր կը բացուին
տարուէ տարի, մէկը կարմիր եւ միւսը ճեր-
մակ: Մահուան գիրիկ իրարու միացած եր-
կու սիրահարներուն հոգիներն են այդ վար-
դերը, որոնք քարերու անզգայ ընդերքը կը
բուրումնաւէտեն:

ՀԵՐԱՍԻՄ

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՁԱԿԱՆ

(ՁԱՏԿԻ ՔՄԱՅՔ)

Յրանապի մէջ Ակադեմիա մը կայ, որ
քառասուն գիտուններէ կը բաղկանայ եւ
կ'ըսուին Անմահներ: Էջմիածնի տպարանա-
կան վարչութիւնն ալ գիտնալով թէ Ստամ-
պուլի մէջ քառասուն հայ «անմահ»ներ կամ
գիտուններ կան, տպագրելի Աստուածաշնչի
օրինակներէն քառասուն հատ կը ղրկէ:

Եւ այդ անմահներու կարգէն չըլլալով եւ
տգէտ ըլլալով ի Սուրբ Դիրս, կը դիտեմ թէ
այդ մեր անմահներէն ո՞րը պիտի ճշդէ սա
երկու բառերէն մէկը, կտեցի՞ն թէ կարեցի՞ն:

Նախածնողք մեղանչելէ յետոյ, երբ տե-
սան թէ մերկ են, իրենց մերկութիւնը ծած-
կելու համար թղենիի տերեւներ կտեցի՞ն կամ
կարեցի՞ն իբր տիածանելի:

Որովհետեւ Աստուածաշնչի հին ու նոր
ձեռագիրները միաբան չեն դարերէ ի վեր,
ինչիւր եղած է թէ ո՞րն է ճիշդ բառը:

Անոնք որ կտեցի՞ն բառին դէմ են, կը
պնդեն թէ կարեցի՞ն է ճիշդը, որովհետեւ այն
ատեն դրախտին մէջ դանակ ու մկրատ
չկային. իսկ անոնք որ կարեցի՞ն բառին դէմ
են, կը պնդեն թէ ատեղ ու դերձան չկային
այն ատեն: Ո՞րն է ճիշդը.—Անմահներէն չեմ

եւ անմահ ըլլալու շնորհք ալ չունիմ, որ
ճշդեմ:

Կը խոստովանիմ մեղքս:

Նոյնպէս Նոյի տապանէն ներս կ'առնուին
անսուրբ կենդանիներէն երկ—երկու, իսկ
սուրբներէն՝ եօթնական զոյգ: Անոնք՝ որ մը-
սակեր չեն, ինչպէս Բիւզանդիոնի մէջ ալ
դիտուած էր, կը պնդեն թէ անսուրբներէն
ոչ եօթնական, այլ երկ—երկու ներս առ-
նուած են, իսկ անոնք որ մասկեր են՝ հա-
կառակը կը պնդեն:

Մեր անմահներուն թողլով այս դատաւա-
քը, եւ կ'ողջունեմ դամեւեսին, որք սիրող
են եւ ընթերցող Ս. Գրոց, շնորհաւորելով
Սուրբ Զատիկը. Գրիստոս յարեա՛ւ:

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱՐՏԻՋԱԿՅԻ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ՕՐԱԳԻՐԵՆ ՔԱՂՈՒԱԾ

(ՆՈՐԱՎԷՊ)

ՇԱՐԱՔ

Շատ տխուր եմ: Տխրութիւն մը, որ
մինչեւ ոսկորներուս խորը թափանցած է.
ինքզինքս այսքան տրտում չէի գտած մինչեւ
հիմա. երեւակայէ՛ Սիրանոյշդ, որ պատուհա-
նին առջեւ, գլուխը բարձին դրած, մտածէ...

Կը վախնամ որ իմ պատմութիւններովս
դըն՛դ կը ձանձրացնեմ, սիրելի բարեկամու-
հիւս: Բայց դո՛ւն եւ յանցաւորը, ինչո՛ւ կը
ստիպես որ օրագիրէս քանի մը էջեր ղրկեմ
քեզի: Ա՛հ, եթէ գիտնայիր որ սա վայրկեա-
նիս սիրականիդ սրտին մէջէն ինչե՛ր կ'անց-
նին:

Աստուանց, եղբօրս հետ ժառանգն գա-
ցինք: Մտեմուքիւնները հետս առի, որպէս
զի հոն կարդանք: Ժամուկէս անընդհատ
կարդացինք, բայց չո՛ւտ ձանձրացայ:

Թափանցիկ, անդայտ մշուշի մը մէջէն,
հեռուէն ծովը կ'երեւար: Արեւը, դարնան
անդօր արեւ մը, երեսս կը շոյէր ու աչքերս
կը խաղտեցնէր: Կը ձանձրանայի: Աննպատակ
պառայաններէն երբեք հաճոյք չեմ զգացած
կեանքիս մէջ:

—Ամէն անգամ որ ինծի հետ դուրս ելլես՝
կը ձանձրանաս, ըսաւ եղբայրս, Զարուհին
կամ Արաքսին պէտք է որ...

—Այո՛, ընդամիջեցի վայրկենաբար, որով-
հետեւ անոնք բարեկամութիւնս են, մինչդեռ
դուն եղբայրս... վստահ եմ որ բարեկամնե-
րէդ մէկուն հետ դուրս ելլելով, աւելի եր-
ջանիկ կը դգաս ինքզինքդ, քան թէ ինծի
հետ:

Երեսն նայեցաւ: Վշտանալու ձեւեր ցոյց
տուաւ:

Ախ, Զարուհի՛ս, գիտե՞ս թէ ո՛րքան կը
սիրեմ եղբայրս:

Վշտացուցի զայն, անոր համար ահա այս-
քան տխուր եմ, անոր համար տրամութիւնը
մինչեւ ոսկորներուս խորը թափանցած է այսօր:

Անկեղծութեանս երեսնէն չա՛տ կը չար-
չարուիմ, բայց հաւատա՛ որ ինքզինքս այս-
քան տոգոյն չէի գտած բնաւ, աղուո՛ր Զա-
րուհիս:

ԿԻՐԱԿԻ

Գիտցածիդ պէս եմ տակաւին: Ի՛նչ որ
ըրի՛ եղբորս սիրաը չիլըցայ շինել: Ըրած
խօսքս կը կրկնէ միշտ, տարօրինակ ու հեղ-
նախառն արտասանութեամբ մը:

Ի՛նչ ընեմ, դո՛ւն ըսէ:

ԵՐԿՈՒՇԱՐՅԻ

Առանց քեզի պիտի չլինամ ապրիլ:

Կը զգամ որ կարօտը կը մըրկէ ներսս.
բայց տակաւին տամբնիկնդ օր չընեմ բաժ-
նուելդ... ի՛նչպէս պիտի ապրիմ...

Անշահախնդիր, անկեղծ բարեկամները մեր
հոգիին ընկերներն են: Շա՛տ կարօտցեր եմ
զքեզ, սրտակի՛ցս:

Ըսի՞ որ հաշտուած ենք եղբորս հետ. բայց
կը գիտեմ որ տակաւին ան իր էրիկ մարդու
յամառութիւնը կը շարունակէ... կարելի չէ
որ մոռնայ... կիները դիւրաւ կ'առնուին,
անշահն, ոչինչ խօսքէ մը կը տոգունին,
բայց, ի փոխարէն, շատ մըն ալ կը ներեն:
Եղբայրս սիրտս կը հատցունէ կոր. հաղար
անգամ զղջացի ըսելուս համար. անխոհե-
մութիւն սեպեցի, անմտածութիւն սեպեցի,
կարելի չէ՛...

—Ան ուրիշ, ես ուրիշ, կը կրկնէ միշտ...

Երկուքնիդ ալ կը սիրեմ, պաշտելի Զարուհիս:

ԵՐԵՔՇԱՐՅԻ

Պատուհանէս դուրսը կը գիտեմ:

Շղարհներու գեղլուութենէն զինովցող
ցնծութիւններ, իրենց մագուսէ վառակը չնոր-
հալիօրէն ցուցադրած, կը քալեն, կ'երթան,
կու գան:

Կառքեր, ձիաւորներ, թրամուէյներ, ան-
ցորդներ: Ամէն օր է աս, ամէ՛ն օր: Եւ եր-
եւակայել որ անոնք ամէնքն ալ օգ առնելու
համար դուրս նետուած են... այս ամպամած
ու հեղձուցիչ օդին:

Անծանօթին հմայքն է որ իր հեշտութիւնը
կ'արեւէ անոնց չորսդին, գոնէ այսպէս կրնամ
ենթադրել ես:

Իրիկունը, եղբայրս իր հետ Քալիօնէն բե-
րած էր: A la mode կտոր մըն է անիկա,
Շովինատի ամէնէն սիրուն ու զուարթ հե-
ղինակութիւնը, զոր անմիջապէս նուազեցի,
եղբորս ձեռքէն խլելով:

Շատ անուշ տպաւորութիւն մը ըրաւ վը-
րաս: Հատ մըն ալ քեզի՛ զրկեմ, եթէ հոտ
գնելու դիւրութիւն չունիս: Կը յուսամ թէ
դուն ալ պիտի հաւնիս անոր:

Այն անձերը, զորս կը սիրենք մեր ամ-
բողջ հոգիովը, չենք ուզեր սր մեղի հակա-
ռակ նախընտրութիւններ ունենան: Կը ստի-
պենք որ մեր կարծիքներուն համամիտ ըլ-
լան, մեր հաւնածին իրենք ալ հաւնին, կը
փափաքինք որ մեր երազները ունենան ա-
նոնք: Բայց ասոնց համար է որ արդէն մենք
իրար կը սիրենք:

ԶՈՐԵՔՇԱՐՅԻ

Արաքսին եկաւ Կըյիլէ՞ս երրորդութիւնը...
նոր անուն մը սկսած են տալ մեզի, Les trois
grâces... կ'երեայ թէ դուն թալիան ես,
Արաքսին՝ Ազլայէն ու ես՝ Երրորդնէն:

Արաքսիին հետ այսօր Ռէժինն ալ մեզի
կաւ: Տեսնելու ես, հիմա տուելի՛ գեղեցկա-
ցեք է անիկա:

Զիւնի պէս ձերմալ դէմք մը, որուն չուրջ
սուզին քցալիլ իր խիտ սեւութիւնը կը հո-
սեցնէ, զմայլելի դիմադրիծներուն աղուորու-
թիւնը ընդլայնելու համար: Կանգնադեղ հա-
սակ մը, նուրբ ու չնորհալի ձեւերով, բա-
րակ ու շքեղ սրունքներու վրայ... խեղճ
եմ ես... հիմալ ալ սկսայ իրապաշտութիւն

ընել... Ի՞նչ պիտի ըսեն էրիկ մարդերը, եթէ երբեք որ մը, օրագիրս կարդալու կամ թղթատելու յոգնութիւնը յանձն առնեն:

Սիրուն աղջիկ է Ռէթինը, ամէնքն ալ կը հաւնին անոր:

Տեսնաս ի՞նչ չարածձի ալ է, ամէն մէկ խօսքին սրախօսութիւն մը կը նետէ:

Արաքսիին պատմեցի եղբօրս պարագան: Ան ալ ինծի իրաւունք տուաւ, ինչպէս կ'ենթադրեմ թէ դուն ալ միեւնոյն բանը պիտի ընես: Ի՞նչ դիւրաւ իրար կը հասկնան աղջիկները:

— Ի՞նչ մը շատ եսասէր են սա էրիկ մարդերը, ըսաւ Արաքսի, երբեք չեն ուղեր որ ուրիշ մը սիրելի իրենց խոստովանիս. կ'ուզեն, կը պահանջեն որ մի՛ միայն զիրենք սիրենք:

Ի՞նչ կ'ըսես այս մտածումին համար. ես շատ ճշմարիտ կը գտնեմ զայն:

Կարդացինք, գաշնակ ու ջութակ զարկինք, վայրկեանը անգամ մըն ալ զքեզ յիշելով:

ՀԻՆԳՇԱԲԹԻ

Կէս օրին մօտ նամակդ ստացայ: Ի՞նչ աղուոր դրած էիր, սիրելի Զարուհիս: Ի՞նչ այդքան սիրուն նամակ չէի ստացած: Հեռուէն զգացուած սիրոյ կարօտն է որ զքեզ գրդած է այդքան աղուոր գրութիւն մը ընելու: Զգացումներդ կրցած էիր պատկերալից ու ճարտար կերպով նկարագրել հոն: Բայց գիտես արդէն որ ես անանկ բաներ չեմ պահանջեր քեանէ, կը բաւէ որ կը սիրես զիս, ու ես կը սիրեմ զքեզ, երկուքս ալ անկեղծ բարեկամութեամբ մը:

Նամակդ մամայիս ու եղբայրներուս կարգացի, ամէնքն ալ հաւնեցան անոր: Եւ իւրիկունը, երբ ինքզինքս արդարացիօրէն չափազանց ուրախ ցոյց կու տայի, եղբայրս դարձեալ կրկնեց իր չար խօսքը:

— Անկէց է. ան ուրիշ, ես...

Կարծես թէ զքեզ չի սիրեր երբեք, Զարուհիս:

Հաւատա՛ որ ճիշտ է Արաքսիին ըսածը, չա՛տ եսասէր են սա էրիկ մարդերը, բայց համոզուէ՛ որ եղբայրս ինծի չափ զքեզ կը սիրէ. մեկնած օրդ ապուշի պէս էր, մինչև

իրիկուն քու անունդ տուաւ, հետը չէինք կրնար խօսիլ:

ՌԻՐԱԹ

Դիշերը, պատշգամբն վրայ:

Սա վայրկեանիս քմահաճոյքը ունեցայ խորհելու թէ եկող տարի այս գիշեր առկի գո՞հ թէ դժգոհ տպաւորութիւններու ենթակայ պիտի ըլլամ:—Ո՞վ գիտէ, ըսաւ ձայն մը ներսէս, արթօրէն: Ո՞վ գիտէ, կըրկնեցի կակաղելով, շուրջս ո՛չ ոք նշմարելով:


Երկնքին վրայ հրաշալի լուսին մը կայ, անքող մաքուր դէմքի մը պայծառութեամբը շողշողուն: Դուրսը աղմուկ, ոգեւորութիւն, անցուղարձ:

Ու ես ներս կը քաշուիմ պատշգամբն, գըբ՛դ վնասելով:

Եւ չարաչաւք յուսախարութեամբ մը կը զգամ պակասը կուրծքիդ, որուն վրայ դըլուխս հանգչեցուցած, աչքերս գոց, ներանձնացած, ժամերով պիտի երազէի, երազէի...

ՄՅՈՒԻ ՅԱՎԷԱՆԵՒՅԵԱՆ

ՓՈՐԱՆՅՈՒՄ



Կուրծք բռնած յոյ՛ր ձեռքերով քսպիսակ, ժանեակներուն պարահիւսմե՛ն՝ սարսքուն, Թախանձանքի նայուածքով կոյսերուն, Ընկողմանած եր յուրօրե՛ն, հերարձակ:

Վարագոյր բաց եր նոսէն: Արեւին Հուրօս ոսկին դեռ կ'ողողուէր հոս ու հոն: Կոհակներ ալ բարկ բոյրերու անկանոն: Լուսքիւնը յուրօրե՛ն վեպեր կուլար հին:


Ու աղջիկը անփութութեամբ մը սիրուն Բաց դառնակին առջեւ վագեց երգելով Իր ցաւերը կ'ուգէր պատմել իրերուն:

Սպասումէն հիւժած, արփոս իր հոգին՝ Երագներու մեջ քեւածե՛ց ժամերով, Տրամուրդներ՝ փոխանցելով դառնակին:

Մ. Ա. ՊԱՐԱՄԵԱՆ

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՔԵԹԵՐ ՌՈՁԷԿԵՐ



Գերման արդի արձակագիրներուն մէջ, նախանձելի դիրք մը կը զբաղէ Բէթլըր Ռոզէկըր, որուն գեղեցկագոյն մէկ պատմութեան (Erzählung) — գերման ժողովրդային դասակարգի կեանքէն առնուած սեղմ ու կուռ ոճով մը գրուած — Մասիսի գրասէր ընթերցողներուն կը ներկայացնենք (*): Պատմութեան մը ուր տաղանդաւոր գրագէտը այնքան ցայտուն կերպով երեւան կը բերէ բուն ու անկեղծ սիրով մը բռնկած սրտի մը զգացած դայրոյթը՝ ի լուր իր սիրելիին սիրազրկութեան և այն գարմանալի տարօրինակ փոփոխութիւնը՝ զոր առաջ կրնայ բերել սիրուած անձի մը թշուառ, լքուած ու արգահատելի վիճակը: Ռոզէկըր, իր այս պատմութեան մէջ, չի ներկայացնիր իր ընթերցողներուն բան մը չըսող խորհրդածութիւններու տարափ մը, ոչ ալ ճապաղ նկարագրութիւն մը, այլ կը թողու որ անձերն իրենք գործեն ու խօսին, ու ընթերցողները իրենք խորհրդածեն. այնպէս որ շատ անգամ հարկ է ընթերցումը դադարեցնել, դէպքի մը բացատրութեան ժամանակ, պարզապէս մտածելու, ու լաւապէս թափանցելու այն հոգեբանական փոփոխութիւններուն՝ որոնք տեղի կ'ունենան նկարագրուած անձերուն մէջ: Ռոզէկըրի համար, սէրը՝ վաղանցիկ, խաբուսիկ զգացում մը չէ, որ կրնայ վայրկեանապէս ցրուիլ, ուժգին հովէ մը անմիջապէս վարստուող պատառ մը աղջամուղջի պէս, այլ ուժով ու բուն զգացում մը՝ որմէ բունուողը, հակառակ ամէն տեսակ աննպաստ հանգամանքներու, ա'լ չի կրնար ճողոպրիլ անոր կաշկանդող պարաւանդներէն:

Կ'արժէ որ ուրուագիծով մը ծանօթացնենք կեանքն ու գործունէութիւնը այս հանձարեղ գրագէտին՝ որ իր գրչի գործունէութիւնը սկսելէ առաջ, ունեցած է կեանքի ու զբաղման այնպիսի տարօրինակ շարժանք, կարելի է ըսել, բնաւ առնչութիւն մը չունին ու չեն ալ կրնար ունենալ մեծ ազդեցւոյ մը ունեցողի մը հետ:

Բէթլըր Ռոզէկըր, հանքագործ գիւղացիի մը որդին, ծնած է 1843 յուլիս 31ին Շթալըրմարքի մէջ (Հարաւային Աւստրիա) Ալբրէկիւզը: Մինչեւ տասնութը տարեկան հասակը, Ռոզէկըր կը մնայ պարզ գիւղացի մը, առանց ուսման ու գիտութեան ամենադոյզն ծանօթութիւն մը իսկ ունենալու, բառին բովանդակ նշանակութեամբ շինականի կեանք մը ապրելով: Անկէ ետքը կը ձգէ իր զբաղումը ու կ'երթայ մօտակայ քաղաք մը և կը սկսի զբաղիլ այս անգամ... Գերձակութեամբ: Սակայն կ'երեւայ թէ այս միջոցին իր ժամանակը՝ ուսման տեսակէտով՝ բոլորովին ալ անարդիւն չանցըներ, որովհետեւ քանակաւ տարեկան եղած ժամանակ, ո'վ գիտէ ի'նչ շարժառիթով, կ'որոշէ թողուլ այդ արհեստը — և շատ լաւ կ'ընէ, գերման գրականութիւնը շատ բան կը պարտի անոր այս որոշման — ու կը սկսի ուսման հետեւիլ: Կրացի մէջ կը յաճախէ վաճառականութեան ու ճարտարարուեստի ակադեմիան, ուր փայլուն շրջան մը կը բոլորէ: 1876ին կը ձեռնարկէ ժողովրդական ամսագրի մը (Հայմկարքըն) հրատարակման: Ահա այդ թուականէն կը սկսի իր գրական կեանքը ուր յարաւորաբար յաջողութիւններ կ'ունենայ և վերջապէս կը հասնի փառքի այն գագաթնակէտին ուր կը դանուի հիմակ: Իր հիմնած ու հրատարակած ամսագրին մէջ, և ուրիշ հանդէսներու մէջ ալ, կը հրատարակէ գիւղական կեանքէ առնուած պատմութիւններ (Geschichte), պատմութեան (Erzählung), գեղջկական նկարագրութիւններ, որոնք իրենց ամբողջովին նորութեան ու ինքնատիւութեան զրոյմով անմիջապէս ընդհանուր ուշադրութեան առարկայ կը դառնան: Այս ժամանակէն սկսած՝ Ռոզէկըր հատորներ լեցուցած է, մէկը միւսէն իսկաւորապէս, գեղեցիկ ու թովիչ, որոնց թիւը կը հասնի քառսունի և որոնք այնքան զարմանալի ճշգրտութեամբ ու բնականութեամբ կը

(*) Ծ. Խ. — Յաջորդ թիւով պիտի հրատարակենք այդ պատմութեան, Մասիսեան փոքորիկ:

նկարագրեն գիւղական կեանքը, իր բոլոր մանրամասնութեամբ, չինականին աշխատանքը ու կենցաղավարութիւնը, անոր հաւատալիքները, բարքերը, սովորութիւնները են. որոնց ընթերցումով մարդ կը հմայուի պարզապէս:

Ռոզէկըր գրած է նաեւ թատերգութիւններ ու բանաստեղծութիւններ՝ Շթայըրմարքի բարբառով՝ որոնք նոյնպէս բաւական յաջողութիւն գտած են: Գերման գրագէտը իր գրական գործունէութեան վերջակէտը դրած չէ սակայն ու դեռ կ'արտադրէ գործեր որոնց հրատարակման ժամանակ, հրատարակիչները բաւ կը համարին իբրեւ ռեկլամ յիշել միայն թէ՛ անոնց հեղինակը Ռոզէկըրն է:

Բաց ի երկարաշունչ վէպերէ, պատմածքներէ ու նորավէպերէ, Ռոզէկըր կը գրէ նաեւ ուրուագիծներ, ֆոզոքիներ՝ գլխաւորաբար Die Woche (Եօթներեկ) գերման նշանաւոր շաբաթաթերթին մէջ՝ որուն գրական բաժնին ամէնէն գնահատուած աշխատակիցն է:

Ռոզէկըրի ոճը—գերազանցապէս ինքնատիպ—, գրեւորակերպը, ամբողջապէս իրն է. կատարելապէս գրական վայելք մը կ'ունենայ մարդ, երբ կը կարդայ անոր գործերը. միայն թէ իր թունդ գերմանական բացատրութիւնները ու մանաւանդ գերման ժողովրդական լեզուէն առած իր բաղմամբիւ ձեւաբանութիւնները, դարձուածքներն ու բառերը քիչ մը դժուարասկսալի կը դարձնեն զինքը, իր ոչ-գերման ընթերցողներուն: Զինքը ամբողջովին հասկնալ կարենալու համար, պէտք է աւրած ըլլալ գերման կեանք մը: Սակայն իր այս գրեւորակերպովն է թերեւս որ այնչափ սիրուած ու ժողովրդականացած է:

Վերջացնելէ առաջ այս համառօտ ուրուագիծը, պատմեմք իր կեանքէն միջադէպ մը՝ որ այնքան ցայտուն կերպով երեւան կը բերէ թէ ան ո՛րչափ սէր ու յարգանք կը վայելէ, նոյն իսկ ռումիլ գեղջկուհիներէն:—Ռոզէկըրի մէկ ճամբորդութեան ժամանակ, գիւղացի պարզուկ կին մը, որուն քով անպատճառ կարդացուած էին՝ իրենց կեանքէն առած գործերը,—իր գաւկին հետ

կը փութայ, կը հասնի կայարան, կը ներկայանայ անոր ու կը խնդրէ որ իր տղան գիրկն առնէ ու համբուրէ: Բարի կինը այն միամիտ ու անխախտ հաւատքը ունի թէ այդ համբոյրը խիստ բարերար ազդեցութիւն մը պիտի ունենայ իր զաւկին վրայ: Կը գուշակէք անուշտ թէ Ռոզէկըր սիրով կը կատարէ բարի գեղջկուհիին խնդիրը, ու ետքէն ալ քանի մը գեղեցիկ էջեր կը գրէ՝ այս պզտիկ այլ իրապէս մեծ նշանակութիւն ունեցող միջադէպին առթիւ:

Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ԱՐԺԱՆԱԽՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆ

Յունաստանի թագաւորը Ս. Փրկչի արքայական կարգին Ասպետութեան խաչը նուիրած է Սինկէր ընկերութեան Արեւելքի ներկայացուցիչ Պ. Ռոզէնսթայնի: Այս բարձր գնահատումը՝ Սինկէրի մեքենաներուն գերազանցութեան նոր և փայլուն մէկ ասպացոյցն է, և Հելլէն Կառավարութիւնը այս պատուանշանը շնորհելով ուղած է վարձատրել այն մեծ ծառայութիւնները զորս Սինկէր ընկերութիւնը չի դադրիր մատուցանելէ հասարակութեան ամէն դասակարգերուն: Գիտենք արդէն որ, չէ թէ միայն Եւրոպայի վեհապետները եղած են գնահատող այս ծառայութեանց, այլ նաեւ Վեհ. Սուլթանը քանիցս բարեհաճած է իր Կայս. բարձր շնորհներուն արժանացնել այս աշխարհածանօթ Լոնկերութիւնը:

Գոհունակութեամբ կը դիտենք մեր մայրն ալ, որ մեր հասարակութիւնը օր օրի աւելի՛ գնահատելու վրայ է Սինկէրի մեքենաներուն գերազանց յատկութիւնները, ինչ որ համապատասխան է արդէն իր իսկական շահերուն:

Հրատարակուեցաւ Անգլիեիէն Հայերէն գրպանի բառարանը: Գին 8 դր: Վաճառման կեդրոնատեղին է Սագաւան Տպարան, Կալաթա, Գուրչուհու խան, թիւ 7:

Արժուէք Կ. Ս. ԻԻԹԻԺԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

Կ. Յ. ՏԵՒՐՄԵՆՃԵԱՆ
ՍԱՄՍՈՆ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԻԻՆԻՅՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը 1/14 մարտէն սկսեալ իր
գրասենեակները փոխադրած է Պոլիս, Սուլ-
թան Համամ նորաշէն Բաթըրճի Օղլու
Բասաժը:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Գ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՅ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԷԻՆ ԴԷՄ

ԳԵ. ՆԵ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խեն մինչեւ իրիկուան ժ. 11 $\frac{1}{2}$

ԲԵ. ՊԵ. ՈՐ. օրերը ճեն մինչեւ 11 $\frac{1}{2}$

Կիրակի օրերը ժամադրութեամբ



ՅՈՎՍԷՓ ԷՖ. ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ
Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61
Չըմանեան արաւքման

Պալպալեան ամէն օր աղոյշի ամէն տե-
սակ հիւանդութիւններով տառապողները
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեք-
շաբթի մինչեւ ժամը 5: Գիշերուան ո եւ է
ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու չիճած աղու-
ները: Յորեկները աղոյշ քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին
կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Գ Ն Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000	Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ն Ն Ա Յ Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000	Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ՆԻ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՞ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի
ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղկան (accumulation
des bénéfices) ՅՈՒԻԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաթըրճի Օղլու

Դործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ